

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՎՊՄԻ-ի ռեկտոր

\_\_\_\_\_ Գ.Կ. Խաչատրյան  
“ 08 ” \_\_02\_\_ 2013թ.

**Կանոնակարգ**

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
ՊՈԱԿ-ում լրացուցիչ կրթության (դասախոսների վերապատրաստման և  
մասնագիտական որակավորման բարձրացման) ծրագրերի կազմակերպման**

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ \_\_1\_ “ \_\_24\_ “ \_\_01\_\_ 2013թ.)

## **1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1 Կրեդիտային համակարգի հենքով ՎՊՄԻ-ում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և մասնագիտական զարգացման սույն ծրագրի (այսու՝ *Ծրագիր*) նպատակն է՝ ապահովել դասախոսների ընդհանրական, առարկայական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը:
- 1.2 Ծրագիրը կազմակերպվում է ըստ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» մեթոդական փաստաթղթի, որը հաստատվել է ՎՊՄԻ գիտական խորհրդի 2012թ. հունիսի 29-ի թիվ նիստում:
- 1.3 *Ծրագիրը* պարտադիր է վաթսույն տարին չլրացած, ՎՊՄԻ հիմնական հաստիքով աշխատող դասախոսների համար՝ մանկավարժական առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունենալու պարագայում: ՎՊՄԻ մյուս դասախոսները, ինչպես նաև հանրապետության այլ բուհերի դասախոսներ *Ծրագրին* կարող են մասնակցել կամընտրաբար:
- 1.4 Դասախոսների մասնակցությունը Ծրագրին ֆինանսավորումը կատարվում է սահմանված կարգով:

## **2. Դասախոսի վերապատրաստման անհատական ծրագրի ձևավորումը**

- 2.1 Դասախոսը *Ծրագիրը* կատարում է հնգամյա ժամկետում (2012/2013 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից սկսած) անհատական պլանով՝ աստիճանաբար կուտակելով սահմանված կրեդիտների քանակը:
- 2.1.1. Այլ ժամկետում *Ծրագրին* միանալու դեպքում դասախոսի վերապատրաստման հնգամյա փուլը հաշվարկվում է տվյալ կիսամյակից սկսած:
- 2.2 *Ծրագրի* հնգամյա բեռնվածությունը կազմում է 30 կրեդիտ, որից 7-ը հավաքվում է առարկայական կարողությունների զարգացման կառուցամասի մոդուլներից, 6-ը՝ դասավանդման հմտությունների զարգացման կառուցամասի մոդուլներից, 15-ը՝ հետազոտական կարողությունների զարգացման կառուցամասի մոդուլներից՝ համաձայն հետազոտական գործունեության տեսակների համար սահմանված կրեդիտատարության, ներկայացնելով անհատական հետազոտական աշխատանքները: Ծրագրում 2 կրեդիտ հատկացվում է

ամփոփիչ ատեստավորմանը՝ գիտական հաշվետվության ներկայացմամբ:

### **3. Վերապատրաստման ծրագրի կառավարումը**

3.1 Ծրագրի կազմակերպական հարցերով պատասխանատուն Լրացուցիչ կրթության բաժինն է (ԼԿԲ), որը համակարգում է ողջ աշխատանքները:

3.2 Ծրագրի բովանդակային հարցերով՝ պատասխանատվություն են կրում ՎՊՄԻ համապատասխան ստորաբաժանումները՝ ամբիոնները, կենտրոնները և նրանց ղեկավարները:

3.2.1. Ամբիոններն ու ֆակուլտետները պետք է վերահսկեն իրենց դասախոսական համակազմի կողմից ծրագրի կատարումը՝ նկատի ունենալով, որ այդ մասին ամենամյա տեղեկատվություն է ներկայացվում գիտխորհուրդ:

3.2.2. *Ծրագրի* շրջանակներում շահառուն ունկնդիր դասախոսն է: Յուրաքանչյուր ունկնդիր պետք է *Ծրագրով* իր վաստակած կրեդիտների մասին ժամանակին ԼԿԲ ներկայացնի համապատասխան փաստաթղթեր և հավաստիանա, որ դրանք գրանցվել են իր հաշվին: Չներկայացնելու դեպքում բացասական հետևանքը կրում է ինքը՝ շահառուն:

### **4. Վերապատրաստման ծրագրի կազմակերպումը**

4.1 Կրթական մոդուլների ուսումնական ծրագրերը մշակում են պատասխանատու ստորաբաժանումները՝ համապատասխան ամբիոնները և կենտրոնները:

4.2. Նախատեսվող դասընթացների ժամանակացույցը և ուսումնական ծրագրերը ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա վերջին օրը տեղադրվում են ՎՊՄԻ կայքէջում, ինչպես նաև ուղարկվում են համապատասխան ստորաբաժանումներ:

4.3. Դասախոսը ժամանակացույցին համապատասխան ընտրում է տվյալ կիսամյակում ունկնդրելիք դասընթացը (դասընթացները) և կիսամյակի երրորդ շաբաթվա ընթացքում ԼԿԲ ներկայացնում մասնակցության հայտ՝ էլեկտրոնային ձևով և թղթային տարբերակով, որի գրանցումն իրականացվում է ՎՊՄԻ գործավարության կարգին համապատասխան:

4.4 Սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

4.5. Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել նվազագույնը 5 ունկնդիր: Ժամանակացույցը հաստատվում է

համակարգող պրոռեկտորի կողմից և տեղադրվում է ՎՊՄԻ կայքէջում, ինչպես նաև ուղարկվում մասնակից ունկնդիրներին:

4.6. Խմբերի կազմը և պարապմունքների սկիզբն ու ավարտը սահմանվում և հաստատվում են ռեկտորի հրամանով: Պարապմունքներն սկսվում են կիսամյակի հինգերորդ շաբաթվանից:

4.7 Դասընթացն ավարտվում է ատեստավորմամբ (քննությամբ կամ ստուգարքով):

4.7.1. Պարապմունքներին մասնակցած, բայց ատեստավորում չանցած ունկնդիրը քննությունը կամ ստուգարքը կարող է նորից հանձնել՝ կրկնելով միայն կրեդիտներ չհավաքած մասի դասընթացը:

4.7.2. Այլ բուհում (հանրապետության կամ արտերկրում) որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման ծրագրերով դասախոսի ձեռք բերած արդյունքները կարող են ճանաչվել ՎՊՄԻ-ի կողմից՝ *Ծրագրի* համապատասխան բաղադրիչի համար սահմանված կրեդիտների հաշվառմամբ:

## 5. Վերապատրաստման ծրագրի արդյունքների ամփոփում

5.1. Դասախոսի համար *Ծրագիրն* ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որի համար հիմնական չափանիշ է ծրագրով սահմանված պահանջների կատարումը:

5.2. Շրջանավարտ ունկնդիրը կազմում է *Ծրագրի* կատարման մասին իր հաշվետվությունը և ներկայացնում ԼԿԲ:

5.3. ԼԿԲ-ն ստացած հաշվետվությունների վերլուծությամբ հավաստում է ունկնդիրների մասնակցությունը և ընդհանուր հաշվետվություն ներկայացնում ատեստավորող հանձնաժողով՝ ամփոփիչ ատեստավորման: Ատեստավորող հանձնաժողովի կազմում են՝ ՎՊՄԻ ռեկտորը (նախագահ), պրոռեկտոր (ներ)ը, ԼԿԲ-ի ղեկավարը և ծրագրի բովանդակային հատվածի պատասխանատու ամբիոնի վարիչը:

5.4. Ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած դասախոսին հանձնաժողովի որոշմամբ 10-օրյա ժամկետում տրվում է սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայագիր:

Ամփոփիչ ատեստավորում չանցածները ստանում են տեղեկանք ծրագրին մասնակցելու մասին՝ կատարման ծավալի նշումով: